ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 նոյեմբերի 2023թ. թիվ 741-Ա

Հ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻՆ ԵՎ Տ.ՀՈՎՍԵՓՅԱՆԻՆ ՌՈՒՄԻՆԻԱ
ՄԵԿՆԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2335-Ն որոշմամբ սահմանված կարգի 1-ին հավելվածի 7-րդ կետով, 2018 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 1230-Ն որոշմամբ սահմանված կարգի 9-րդ և 12-րդ կետերով, հիմք ընդունելով ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2023 թվականի նոյեմբերի 22-ի N ԳՍ/17.3/36005-2023 և ՀՀ արտաքին գործերի նախարարի տեղակալի 2023 թվականի նոյեմբերի 22-ի N 1101/61749-23 գրությունները, հաշվի առնելով Հարգիտա երկրամասի փոխնախագահի 2023 թվականի նոյեմբերի 14-ի հրավերը՝

Ո ր ո շ ո ւ մ եմ.

1. Լոռու մարզպետի տեղակալ Հովհաննես Ավետիսյանին և մարզպետի խորհրդական Տիգրան Հովսեփյանին ս/թ դեկտեմբերի 3-ից 6-ը ներառյալ թույլատրել մասնակցելու Ռումինիայի Հարգիտա նահանգ կատարվելիք այցին:

2. Հ. Ավետիսյանի և Տ.Հովսեփյանի՝ Ռումինիայի Հարգիտա նահանգ մեկնման հետ կապված ծախսերը հոգում է հրավիրող կողմը, բացի ճանապարհածախսից: Ճանապարհածախսը նախատեսվում է պետբյուջեի միջոցներով:

3. Հ.Ավետիսյանին և Տ.Հովսեփյանին՝ վերադառնալուց և աշխատանքի ներկայանալուց հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում այցի արդյունքների մասին հաշվետվություն ներկայացնել Լոռու մարզպետին և ՀՀ արտաքին գործերի նախարարություն:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

23/11/23

X

ՀԵՂԻՆԵ ՀԱԼԻՎՈՐՅԱՆ

Ա.ԽԱՉԱՏՐՅԱՆ

2023թ. նոյեմբերի 23
ք.Վանաձոր